**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-18/17**

ք. Երևան «04» մայիսի 2018 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մ-Բի-Ռի» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորություն (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով.

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար սահմանված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում)։

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __5__ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Այս կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 9453000 (ինը միլիոն չորս հարյուր հիսուներեք հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները.

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողը իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը.

4.2 Պատվիրատուն իրեն մատուցված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար.

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայության մատուցման յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայության մատուցման արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ.

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունների լրիվ կատարումից:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը.

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասները այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրով կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների կամ ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արժեքային փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքը ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրը ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am համացանցով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից.

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 34 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ.

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | «Մ-Բի-Ռ» ՍՊԸ |
| ք. Երևան, Կառավարական տուն 3 | ք. Երևան, Մյասնիկյան 22/4 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011019334 | Հ/Հ 220083335012000 |
| ՀՎՀՀ 01506515 | ՀՎՀՀ 00417829 |
| Աշխատակազմի ղեկավար՝ ...յան | Տնօրեն՝ ... Բաղդասարյան |
| Կ.Տ. (ստորագրություն) | Կ.Տ. (ստորագրություն) |

Հավելված N 1
«04» մայիսի 2018թ. կնքված
«ՄԱԿՆ-ԳՀԾՁԲ 18/17» ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Ծառայության | | | | Մատուցման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը** |
| 1 | 50111130 | Toyota Camry մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ /2 հատ/ | Ներկայացված է առդիր | դրամ | 1150000 | 1 | ք. Երևան, նաև ըստ անհրաժեշտության ՀՀ մարզեր | Պայմանագրի ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 2 | 50111130 | Toyota Corola մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ /1 հատ/ | Ներկայացված է առդիր | դրամ | 470000 | 1 | ք. Երևան, նաև ըստ անհրաժեշտության ՀՀ մարզեր | Պայմանագրի ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 3 | 50111130 | "Renault Fluence 16" մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ /1 հատ/ | Ներկայացված է առդիր | դրամ | 470000 | 1 | ք. Երևան, նաև ըստ անհրաժեշտության ՀՀ մարզեր | Պայմանագրի ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 4 | 50111130 | Հյունդայի Սոնատա մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ /3 հատ/ | Ներկայացված է առդիր | դրամ | 1200000 | 1 | ք. Երևան, նաև ըստ անհրաժեշտության ՀՀ մարզեր | Պայմանագրի ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 5 | 50111130 | ՎԱԶ 2107 մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ /12 հատ/ | Ներկայացված է առդիր | դրամ | 3663000 | 1 | ք. Երևան, նաև ըստ անհրաժեշտության ՀՀ մարզեր | Պայմանագրի ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 6 | 50111130 | Գազ 3110 մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ /3 հատ/ | Ներկայացված է առդիր | դրամ | 900000 | 1 | ք. Երևան, նաև ըստ անհրաժեշտության ՀՀ մարզեր | Պայմանագրի ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | 50111130 | ՎԱԶ 2121 մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ /3 հատ/ | Ներկայացված է ստորև | դրամ | 900000 | ! | ք. Երևան, ըստ անհրաժեշտության 44 [illegible] | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2016թ. |
| 8 | 50111130 | ՎԱԶ 2106 մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ /2 հատ/ | Ներկայացված է ստորև | դրամ | 700000 | ! | ք. Երևան, ըստ անհրաժեշտության 44 [illegible] | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2016թ. |
| | | Ընդամենը | | | 9453000 | | | |

* Ծառայության մատուցման ժամկետները չի կարող ավել լինել, քան դրանց վերջնա ժամկետների (5-ը:

** Պատվիրատուի կողմից ծառայությունների մատուցումը սկսվում է Պատվիրատուի հայտի հիման վրա [illegible] աշխատանքային օրվա ընթացքում:

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

### Մարդատար ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների

1. Ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է ունենա անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և մասնագիտական անձնակազմ, այդ թվում`

1.1 սպասարկման տարածքում ավտոտրանսպորտային միջոցների պահեստի կամ խանութի առկայություն,

1.2 վերանորոգման համար անհրաժեշտ բոլոր սարքավորումները /ընթացավորի, շարժիչի, էլեկտրական սարքավորումների, յուղման, ռազվալի, վուլկանացման, ինժեկտորի վերանորոգման, ղեկային մասի, փոխանցման տուփի, կամրջակների վերանորոգման, ինչպես նաև մեքենայի ախտորոշման և վերանորոգման համար այլ անհրաժեշտ սարքավորումներ և ծառայություններ/,

1.3 ունենա առնվազն երեք վերամբարձ սարքավորում կամ համապատասխան հորեր:

2. Կազմակերպությունը`

2.1 Պատվիրատուի կողմից էլեկտրոնային փոստով ուղարկված հայտի /ձևը կցվում է/ հիման վրա ավտոմեքենան տեխնիկական սպասարկման կայան ժամանելուց հետո առավելագույնը մեկ ժամվա ընթացքում պետք է ապահովի ավտոմեքենայի ախտորոշումը և, լրացնելով Պատվիրատուի ներկայացրած հայտի իր կողմից լրացման ենթակա մասերը, նույն էլեկտրոնային փոստին ուղարկի ավտոմեքենայի վրա իրականացվելիք աշխատանքների, դրանց ժամկետների և գնի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը.

2.2. Պատվիրատուի էլեկտրոնային փոստին ուղարկված` 2.1 կետով սահմանված հայտով նախատեսվող աշխատանքների կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ Պատվիրատուի էլեկտրոնային փոստից համապատասխան հայտը ստանալուց հետո իրականացնում է ավտոմեքենայի վերանորոգման ծառայությունները: Նորոգման ծառայությունները ըստ անհրաժեշտության պետք է իրականացվեն Պատվիրատուի ներկայացուցչի գիտությամբ կամ ներկայությամբ:

2.3. ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման կայան ժամանելուց հետո առավելագույնը՝ մեկ ժամվա ընթացքում սկսվում է ավտոմեքենայի վերանորոգման գործընթացը /ծառայությունների մատուցումը/, ընդ որում վերանորոգման աշխատանքների ավարտման ժամկետ է սահմանվում թիվ 2.1 կետով սահմանված հայտով նախատեսված ժամանակահատվածը:

3. Պատվիրատուն վճարում է բացառապես իր կողմից էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկված կատարման ենթակա հայտում ներառված և Կազմակերպության կողմից մատուցված ծառայությունների դիմաց:

4. Փոխարինված ավտոմասերը պահանջի դեպքում պետք է վերադարձվի նախարարության ներկայացուցչին:

5. Նորոգման ծառայությունները պետք է իրականացվեն կից ներկայացված ցանկին /23 կց/ համապատասխան:

6. Ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է տրամադրի ցանկում նշված նորոգված մասերի կամ փոփոխված դետալների երաշխիքային ժամկետ /այն տողերի մասով որոնց համար երաշխիքային ժամկետ հնարավոր չէ սահմանել պետք է ներկայացվի համապատասխան հիմնավորում/:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**



**ԿԱՏԱՐՈՂ**



*Ձև 1*
*« » 20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի N հավելված*

# ՀԱՅՏ

Տրանսպորտային միջոցների վերանորոգման և/կամ սպասարկման և/կամ անսարքությունների ախտորոշման

| Հ/Հ | Ավտոմեքենայի մակնիշ | Պետ. համարանիշ | Անսարքության համառոտ նկարագրություն | Կատարողի կողմից կատարվող աշխատանքներ/պահեստամասեր | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | անվանում | քանակ | միավորի գին | գումար | ժամկետ |
| 1 | | | | | | | | |
| 2 | | | | | | | | |
| 3 | | | | | | | | |
| 4 | | | | | | | | |
| 5 | | | | | | | | |

**Պատասխանատու՝**
/անուն, ազգանուն/

____ ____________ 20 թ.

Հավելված N 2
« 04 » մայիսի 2018թ. կնքված
«ՍՍՀՆ ԳՀԾՁԲ-18/17» ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1-8 | 50111180 | Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ | | | | | 2000000 | 3000000 | 1000000 | 4900000 | 5700000 | 7100000 | 8400000 | 9453000 | **9453000** |

* Վճարման ենթակա գումարները նշվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

Ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ____________ | հհ ____________ |
| հվհհ ____________ | հվհհ ____________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________ ______________________ ____________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » «____________» 20 թ.

Պայմանագրի համարը՝ ________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունները | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը ըստ վճարման ժամանակացույցի |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական չափանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով նախատեսված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով նախատեսված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են։

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ____________ ստորագրություն | ____________ ստորագրություն |
| ______________________ ազգանուն, անուն | ______________________ ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«___» ______ 20 թ. կնքված*
*ծառայության պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ______-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______-ին կնքված N ______ ______ գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ______-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______ ______
ազգանուն, անուն
______ ______
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախապատրաստած ներկայացուցիչ՝

______ ______
ազգանուն, անուն
______ ______
ստորագրություն